

ՔԱՐՎԱՆԻԿ

Թիւ 23898
Փետրուար 21, 1972

Հոգեշնորհ

Տ. Արշակ Կրդ. Խաչատուրեան
Հովհանն. Գրիգոր Սարեկացի Եկեղեցւոյ
Եւ Խախագան ծխական Խորհուրդի
Գլխվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Ստացած ենք 1972 Փետրուար 11 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդեք թէ Զեր Խախագան Խորհուրդամբ՝ Յունուար Յօին գումարուած Ձեր
ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի վեց անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը ի՞ւն-
ուրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան ժրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւսաւոր գործունեութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՉՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Գէորգ Արսլանեան
Մայքրը Պաղտասարեան
Գարլոս Պողոքլեան
Իալֆ Զազըրեան
Խաղար Միրաքեան
Հերրի Օտապաշեան